48. Հ'ԻՍԱՍՏՈՒՆ ՏՂԵՆ

Ժամանակով կըլնի մե հա զանգյին լաճըմ: Ունի իրեքյ խատ լաճ: Էնոնցն էլ մեյ հա խեղճ լաճըմ կա մշակ: Էտա մարթու ժամանակն ի կլըմընա որ պիտի մեռնի: Լաճերաց նասիյաթ կուտա. «Տղեյնե՛ր, ես կմեռնեմ, զի ձեզնից ամանաթ՝ չընի իմ փարեն տյու խրջեքյ. ժամանակ ինչ ես կմեռնեմ, կպանեք եմ սնդուկ, փարեն կխանեքյ, որտեղ զի խորեքյ՝ էն փարեն էլ պիրեքյ լյեքյ եմ կուշտ, է՞ն փարեն խարամ փարա յի, ծեր քյրտինքյ թափեքյ, խալալ փարա վաստկեք»:

Էն կախ որ ըսկուն կասի, մշակն ականջ կանի:

Մարթու ժամանակ կլըմընա, կմեռնի: Որ կմեռնի, կտանեն որ խորեն, պստիկ ախպեր կասի. - Ջանը՛մ, մեր խեր ըսնա նասիյաթըմ իտուր մե, պոնեքյ էնոր փարեն տանենքյ խեստ էնոր խորենք, թոնենք կյանք:

Ախպոր խաբարն արիցին, խոր սնդուկ պացին, ինչ կանդար որ փարա կեր, տարան խե խոր խորիցին:

Էտա մշակի վողդեն որ թըմմավ, աղեյթերաց մոտից խաթրն ուզեյ: Էլան էնոր հաշիվ տեսան, կաց պարով արաց. աղեյթերուն էթող կնաց: Կնաց ուր տուն, չյուր հ'էվարին ասաց. - Կնի՛կ, եմ աղեն մեռեր ի, էնոր ինչ կանդար փարա կա, տարած են խեստ եմ աղին խորած են, ես տ'էրթամ խանեմ:

Կնիկն ասաց. - Որ ըսկուն ի, ես էլ կյամ խե քյե, ջվալ պըռնեմ:

- Տյու մի կյա, կնի՛կ, ես մենակ կէրթամ:

Առեց ջվալ, կնաց թեխ ուր աղի կյերեզման: Կնաց ուր աղի կյերեզման փորեց, խասավ նաշին, պախ մ'իտուր նաշին, նաշից ծեն էլավ:

- Հե՞յ, - ասաց, - խողածի՛ն, ես կիտեմ տյու ինչի՞ խամար ես իկե: Էն փարեն որ տյու իկիր ես տանելու, էնորից տյու խեր չըս տիսնա, չես վայելի, մի տանե, վազն արե: Մեկ կյերեզման զիզնից ընցի, մեկել կյերեզման փորի, քյո կսմաթ զյեռ դա յի:

Մարթն էր, քյաշվավ եր, կնաց ուր աղի ասած տեղ փորեց: Էնտեղեն իրեքյ խատ կոտ իխան տյուս:

Մշակն ասայ. «Տո ջանը՛մ, էսա կոտի մեջ ի՞նչ կա, որ զի կսմաթ ելնի, զի կըշտայուցի: Ես էմել կէրթամ թեխ իմ աղի փարեն»:

Կնայ բաշլայեց աղի փարեն խանելու: Էմ էլ նաշից ծեն էլավ, ասայ. - Խողածի՛ն, թե քյե ասի քյո կըսմաթ էն կոտերայ մեչն ի, փարից տյու չես խերի, առ տա՛ր էտա կոտեր:

Մարթն էր առեց կնայ, ասայ. «Կատա ըղզա ախըր պա՛մ՛ կեր էսա տեղ, որ մեռելն ուր տեղից խե զի զրուցեց, ասայ. «Քյո կսմաթն էտոր մեչն ի»: Առեց կոտեր, իթալ ուր ջվալ, էկավ տուն: Ասայ. - Կնիկ, վալա, մեր կսմաթն էսա իրեքյ կոտն էր, առատուն տանեմ էրթամ ծախել, հեմ ատված ի՞նչ կսմաթ տը տա մե:

Էլավ, ջվալ իթալ ուր քյամակ. «Կոտ կծախեմ, կոտ կծախեմ», կնայ չյում չարշին:

Ով կխառցուցի էտա ի՞նչ կոտ ի, կխանի, շանց կուտա խըղին:

Խըլղ որ կտիսնան ինչի կոտ ի, կառնեն կուտան մեչ մարթու գլխուն:

Շատ կֆռւսցուցի, զանգյին հ'իմատուն մարթըմ էսօր ռաստ կուկյա: Էտա մարթն կասի. «Կա չկա էսա իմ ասած կոտն ի»: Կկանչի մարթուն, կասի. - Պե՛ էսա տեղ, ես կառնեմ:

Մարթն կասի. - Էսա կոտեր կառնեմ, ամա բւզառ կանեմ, շիշ խորոտ կկրայյուցեմ, կզա՛րկեմ էսա կոտերայ մեչ, որ կոտ ինչ չծակվավ, ես էն կոտ կառնեմ, էն ինչ ծակվավ՝ չըմ առնե, կտամ քյե:

- Խա՛, - կասի:

Էն կախ իրեքյ կոտ էլ խե մարթուն կառնի, կէրթա: Կտանի շիշ խորոտ կթալի փուռ, կկրայյուցի, խորոտըմ կսըվտկի, կզանի մեչ կոտերւայ, էրկու կոտ կծակվեն, էն մեկն չծակվի, կանեն չանեն, էն մեկ կոտ չծակվե, շիշ չմտնե մեչ:

Կելնի էրկու կոտն կթալի, կառնի էն մեկ կոտ, կասի. - Դե տանենքյ էսօր կըշռւանքյով ոսկի տամ, կոտի կյին:

Կոյւն ի, կտնի կշռիքյի թակ, մեյ թա՛րա՛ֆեն էլ ոսկի կլցի, խեղճ մարթ ուր փարեն կառնի կէրթա՛ ուրախ-ուրախ:

Էտա հարուստ մարթն ի, էտա կոտ կուտա սըխկել, սերտւտըմ ծեթ կսխկի, կմւաղի թեռզի ւյես կշինի, կլցի քյասի մը մեչ, կտնի ականատ, էլ նա՛ կնկան կասի, նա՛ ախչկան:

Էտա մարթու փափաքն էլ էն ի, որ ուր կնիկ ուտի, տղա պիրի: Էրկու կնիկ ի ւարե, հ'ւառճին կնկյնից մեկ ախչիկ ունի, ՝հ'իտին կնկյնից պղա չունի:

Մարթն ի, կթռնի կէրթա խետ ուր գործին. ախչիկ էնան մեր մենակ կմնան տուն:

Ավուր մեկ ախչիկ սանջյու մը կպըռնի որ հահան մեռնելու տյուռն ի: Էտա անըսւպեռ մերն ի, կելնի կէրթա թեխ ախչիկ, կասի. - Ախչիկ, էլի էրթանք վլայ արա՛:

Ախչիկն ի, մեկն կէրթա մեռնելու տյուռ, մեկն կուկյա հ'ա՛րելու տյուռ, ըսկուն սանջյու յի: Ինչ մուքյում կանի, ախչիկ չկանա կայնե: Անսպեռ

մերն ի, ախչկա ծամեր կփաթության վեր ծեռաց, կքյաշի կտանի լվացքի վերեն, կասի. - Տյու էսօր լվաց տ'անես:

Ախչիյն ի, կմնա էնտեղ, մերն կըլնի տյուս: Ախչիկ կասի. «Ես էրթամ եմ խոր հ'էօդեն, հեմ չըմ կանա՞ տեղըմ կընդնել, յան ապրեմ, յան մեռնեմ, կյամ էսա անխոկյի մոր լվացն անեմ»:

Կէրթա հէօդեն, հ'ականատներ ըարեղ էնտեղ էն քյասով տեղ կտիսնա: Կասի. «Ախըր եմ խեր էսա ծոութենի խամար չպիրե՞: Տ'առնեմ տ'թալեմ պերանս, յան մեռնեմ, յան ապրեմ»:

Ախչիկն ի, քյասիյ մեյ կտոր որ կառնի էտա թեոգիյ, կթալի պերան, ախչկու սանջյուն աստծու խրամանքյով կթողնի, կուկյա կնստի լվացի կլոխ, էնոր լվացն կանի:

Անսպեռ մեր տոնիյ կմտնի կտիսնա որ ախչիկն լվացն արե, համա հայի որ պոծնի: Կասի. - Հա՛, օռոսպի, կուխպա, չյուր մկա սանջյու յիր, մկա չյուր կնայի տրկըցի տուն, էկա, լվացն արիր պոծար: Ծանորտութեն պոչի տակ թախքյեր ի:

Ախչիյն ուր լվայիյ կպոծնի:

Ախչկա փոր օր վեր ավուր հա կուռի, կպանցրանաս, տղեն կբաշլայի մեչ ուխչկա փորին խաղալ: Ախչիկ վեր ուր շֆալամիշ կէլնի, կվախենա: Մերն էլ կակխի վեր ախչկան, որ գյեռ խա փորն կուռի, տղով ի: Մերն ի, կբաշլայի ախչկան թրփել, կոտրռտել, թե տյու օռոսպութեն ես արե, հյուրիշ ճամխով ես կնայե:

Ավուր մեկն ի, էտա ախչկան խերն կուկյա կմտնի տուն: Կտիսնա որ ախչիկն կլա, կմրռմրռա, կուտա մեչ ուր կյլխուն:

- Ախչիկ, քյե ի՞նչ էլե:

Ախչիկ պատասխան չի տա, կուլա՛, կմրռմրռա: Մարթն կէրթա վեր ուր հ'էօդեն, մռ կնիկ: - Կնիկ, - կասի, - էն ախչկան ի՞նչ էլե, որ կուլա՛:

- Ի՞նչ տ'էլնի, օռոսպութենի քյար-փեշն ի՞նչ ի, լացն ի: Ինչի՞ կուլա՛. մեչ քյո կեղին ջահել չթողե, որ չքյաշի վիր ուր: Մե հա կնա էնոր փորն իրիշկա, վաղ մեկել մե հա պիճըմ կպիրի, կտնի քյո հ'ատաճ, քյո աչք լիս:

Խերն ի, կէլնի կէրթա մոտ ախչիկն:

Ախչիկն ի, կէլնի կկայնի, մարթն ուրու կանի, որ գյեռ փորն ուռուկ ի, էսօր վաղն ի:

- Ախչի՛կ, բալամ, էսա ի՞նչ փորցանքյ իս պիրե քյո կյլոխ, եմ նամուսի իրև՞ կան կուկյաս:

- Բաբո՛, - կասի, - նստի ես քյե պատմեմ եմ կյլխու կյայած:

Խերն ի, կնստի, ախչիկն մեկ-մեկ կպատմի ուր գյլխու էկածն:

Խերն ասաց. - Հե՜յ, բալա՛մ, ես էն անաստվածի խամարն ի ասիրե, քյե ռաստ էկավ, եմ կնկյան քյոն տարփեր չկա:

Էլ ախչկան ծեն չի տու: Ին ամիս, ին օր, ին սահաթ թըմմավ, աստվածութեն ախչկան լաճ մ'իտու: Ախչկա խորն ջյուլաբ տարան. «Քյո աչք լիս, քյո ախչկան տղե մ'էլաավ»:

Խերն էկավ տուն, տեսավ աղվորթ ի, շատ ուրախցավ:

Էտա տղեն ի աստծու խրամանքյով կճհճանա, կպետանա:

Մենքյ էհանք թեխ թաքավուրու ախչիկ:

Թաքավուրու ախչիկն օրին մեկ էրազըմ կտիսնա, մեչ երազին որ ծկներ մեչ ծովին կխաղան: Առատուն ի, կէլնի թաքավուրուն կպատմի ախչիկն: Կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, կիշեր ըսնա էրազ մ'եմ տիսե: Կուզեմ որ քյեզնե մարթըմ պիրես, էսա երազն խանի:

Թաքավորն էր, ճամխեց հ'իմաստունթերաց հ'իտն, որ կյան ուր ախչկա էրազ խանեն: Որն որ կպիրի, անկարելի յի, չըն կանա խանե ախչկան էրազ:

Ասիյին ֆիլան կյեղ հ'իմաստունըմ կա, թե որ խանի, էն կխանի: Ջյույաբ արին: Հ'իմաստուն ծին խեծավ, քշեց էկավ: Էկավ հ'առվի պըռուկըմ, էն կոտե էլած լաճն էն տեղ կխաղեր: Էկավ ծին էտա հ'առուն արաց-չարաց չընցավ:

Ասաց. - Քյո տուն ավիրի, որ տյու էսա հ'առուն զի չըս կանա հ'ընցուցե, ուրիշ տեղրանք ի՞նչխ պիտի հ'ընցուցես:

Քյոխոտավ զանգյու մ'իզար ծիու փորին: Որ զանգյուն իզար ծիու փորին՝ ծին թըռավ հ'առուն:

Լաճն տեսավ. ասաց. - Հա՜յ անաստվա՛ծ, ի՞նչխ աստծուց չվախեցար, զանգյուն ըտըսնա կյեշ զարկիր մեչ քյու ծիյու փորին:

- Ինչի՞, - ասաց, - բալա՛մ:

Տղեն ասաց. - Քյու կըսըրխու փորի մեջ ջահնիրըմ կեր, էնոր աչք մեչ փորին կուրցավ:

Ասաց. - Բալա՛մ, տյու ի՞նչ կիտես իմ ծին հղի յի, հղի չի, աչք կուրցավ՝ մնաց:

Ասաց. - Ես կիտեմ, քյո ծին հղի յի, համ քյո ծիու ջահնին էլ կյլոխ բաշ ի, իրեքյ ոտքերն էլ չալ ի:

- Հեյ վա՜խ, - ասաց, - ղեմաքյ քանց զիկ հ'իմաստուն մարթ էլ կա մեչ աստվորին:

Էլավ մտածելեն քշեց կնաց մո թաքավոր: Կնաց թաքավորի հ'առաճ:

Թաքավորն ասաց. - Երազ խանող տյու՞ ես:

Ասաց. - Խա՛, ես եմ:

Ասաց. - Իմ ախչիկն ըսնա էրազ մ'ի տիսե. ծուկ մեչ ծովուն կխաղա: Կխանեքյ՝ խանեքյ, թե չէ՝ ծեր վըզքյեր կկտրեմ:

Մարթն մտածեց՝ պա՛ մը չկառցավ ասիր էր: Ասաց. «Էսա տեղ սալսխն տամ, էսա էրազ մեկ թե էն կանա խանե»:

Ասաց. - Թաքավոր ապրած կենաս, ես չեմ կանա խանի քյո ախչկան էրազ, ամաև ֆլան երկիր ըսնա տղե մը կա, թե որ էն ծեր էրազ խանի, թե չէ՝ մարթ չկանա:

Թաքավորն ասաց. - Էտա տղի հ'իմաստութեն ես չըմ լսեր, էտա վո՞վ ի, ո՞ր տեղեն կճանչնաս:

- Թաքավո՛ր, - ասաց, - ֆլան օր որ ես կուկյե քյու քյոշկ-սարեն,

ֆլան տեղ էսա տղեն հ'առվի պռուկ կխաղեր: Եմ ծին արի չարի էտա հ'առուն չթռավ, ես էլ քյոխոտա գանգյում զանիցի եմ ծիյու փորին: Եմ ծին հ'առուն թռավ: Էսա տղեն զիկ ասաց. «Հա՜յ անաստվա՛ծ, տյու ի՞նչխ աստծուց չվախեցար էտա գանգյուն ըտըսնա կայիմ զարկիր մեչ ծիյու փորին»: Էն տեղ մեկ-մեկ էն տղեն ասաց. «Քյո ծիյու փոր ջահնիմ կա, որ տյու զարկիր՝ ենոր աչ աչք կուրցավ, ջահնու ոտքեր չալ ի, կյլոխն բաշ ի»:

Թաքավորն մարթ օրոխկեց, լաճն էկավ:

Թաքավորն ասաց. - Հեյ տղա՛, էրազ խանող տյու՞ ես:

Ասաց. - Խա՛, ես էրազ կխանեմ:

Էն կըսրըխու տերն պիրին, տղին ասաց. - Էսա մարթ կճանչնա՞ս:

- Խա՛, - ասաց, - ես էն մարթ խորոտ կճանչընամ: Էսա մարթ ֆլան տեղ զի ռաստ էկավ, ճոչ հ'առու մ'ենոր ծիյուն ռասատ էկավ: Ենոր ծին էն հ'առուն չէր թըռնի, գանգյու մ'իզարկ, ես ենոր իշունց տվի, չյունքի ծիու փուրու ջահնու աչ աչք կուրցավ, ջահնին էլ իրեքյ ոտքեր չալ, կյլոխ բաշ ի:

Ասաց. - Տղա՛, ենոր ծին կպիրիմ, մորթեմ, որ սութ էլավ, քյո վիզ կգարկեմ:

Ասաց. - Խա՛, եմ վիզ ջալադի հ'առաճ մեկ մազ ի:

Էլան ծին պիրին, փոր ճղին, լաճու ասածին պես ջահնի մը էկավ տյուս, կյլոխ բաշ, ոտքեր չալ, աչ աչք կոր:

Թաքավոր էլավ կըսրըխու տիրոչ սիրտ կյնեց, ճամխու իտիր, սորա տղին ասաց. - Դե արե էրթանքյ եմ ախչկան էրազ խան:

Կնաց մտավ ախչկա հէոդեն:

Ախչիկն էր, էլավ պատիվ պոնեց, նստըցուց ուր կուշտ:

Ախչիկն ասաց. - Տյու՞ ես էրազխան:

Ասաց. - Խա՛, ես եմ, ասա քյո էրազ:

Ախչիկն ասաց. - Հ'առաճի օր որ ես էրազ տեսաս, պստիկ ծուկ մ' էր կխաղեր մեչ ծովուն, մկա էն էրազ էմ էլ հ'մեն օր կտիսնամ, ամա էտա ծուկ օր վեր ավուր կճոչանա, մեչ ծովուն կխաղա, չթոնի ես քյնեմ:

Ասաց. - Թաքավորու ախչիկ, ես կանամ խանե քյո էրազ, ամա կվնասվես, փեռշման տ'էլնես:

Ասաց. - Չէ, պիտի ասես, ի՞նչ ի եմ էրազ:

Ասաց. - Խանը՛մ, պարապ ժամանակ ի, իրեք խատ ասուկ կա, ասեմ՝ նոր քյո էրազ քյե կպատմեմ:

- Խանը՛մ, - ասաց, - վախտով կըլնի մե խա վազիր, էն վազիրին մե հա խորոտ հ'իմաստուն թազի մը կեր: Էտա վազիր ուր մարթեկաց ու թազու խեստ օրին մեկ էլավ կնաց սարըմ նեճիր անել: Խանը՛մ, էնոնքյ շատ ֆռացին էտա սարեր, նեղեցան: Էտա սար որ կեր ոսպին էր, ճյուր չկեր: Խա՛նըմ, վազիր շատ ծարըվցավ: Ինգյան էտա սարեր-քյարեր կան էկան, ճյուր չկընդան, որ էտա վազիր ճյուր խմեր: Կնացին իրիշկացին պանցը սար մ'էր, ճյուր պուտ-պուտ կկաթեր էտա սարից: Վազիրին

ասային. «Վազիր, էսա քյարեն պամ կկաթի, ամա չենք կիտի ճյու՞ր ի, ճյուր չի»: Վազիրն էր ծարըվկիր էր. «Արուն ըլնի, - ասայ, - պիտի խմեմ»: Թասն իտուր հ'առած, թասն էր լցվավ, չլցվավ, վազիրն առեց, պիտի խմեր, իտու պերնին, պիտի խմեր թազին էնոր ոտն էզար թափեց, չէթող վազիրն խմեր: «Հա՜յ, - ասայ, - սատկես քյե պես թազի, տյու՞ ել եմ հ'իտև կան կուկյաս»: Ասայ, թուր քյաշեց զարկեց, թազին խատուց: Վազիրն ասայ ուր մարթեկյաց. «Մարթե՛ր, ի սեր Քյրիստոսի, էլեքյ ինգյերյ կան կյալ, էսա ճրի ակն կընդեքյ, էրթանքյ վեր ակյան, ճյուր խմենքյ»: Էլան ինգյան կան կյալ, ֆռալ: Էտա քյարի կյլո՞խ տեսան որ զոռբա վիշաբըմ խատեր ի, էնոր արուն քյեմ կէրթեր էն քյարից կկաթեր. որ էն վազիր տը խմեր: Էկան վազիրին ասիցին: Վազիր կնաց տեսավ. որ աղվորթ, էն ճյուր որ տը խմեր, էն վիշաբիցն էր կուկյեր: Ծեռն իզար վեր ծնգյան, ասայ. «Հեյ վա՜խ, էս ինչ խալթ էր արի. զարկի իմ թազին խատուցի, մանկյար իմ թազին կիտեր, որ էն ճյուր ճյուր չէր. վիշբի արուն էր, ժահրոտ էր»:

- Խանը՛մ, - ասայ, - խասկըցա՞ր եմ առակ, որ ես ասի:

- Այո, խասկըցա:

- Էն ի՞նչխ փեռշըմավ վեր ուր թազուն. տյու էլ ըսկուն տը փեռշմըվես վեր քյո էրազին՝ որ խասկընաս:

Ասայ. - Ես չեմ կիտե, էտանքան պառվու ճեռոկ են, պիտի եմ էրազ զի պատմես:

Ասայ. - Ինծի ալա էրկու առակ էլ կա, պատմեմ, նոր քյո երազի ինչ էլնելն ասեմ:

- Խանը՛մ, - ասայ, - վախտով իշխան մարթըմ կէլնի մեչ մե հա կյեղի մը: Էտա մարթն էլ ըսկուն բաբաիգյիթ մարթ մ'էր, որ էսա տյուռ չէր մտնե: Խանըմ, էտա մարթու կնգյան աչքն տյուան էր: Էտա բաբաիգյիթ մարթ կթոներ, կէրթեր կյեղի միչու մարթեր կըպըռներ ուր յար: Խանը՛մ, էսա մարթն էլավ կնա՛ց ուր զանգյութեն խըռջեց, կնաց մե հա հ'իմաստուն խավքյըմ իպե ուր խամար, իտիր մեչ կաֆասին, կախեց հ'առիքյ: Խանը՛մ, էտա մարթ ուր կնիկ թալիմ կաներ էտա խավքյուն: Կէրթեր տյուս խետ էնոր աշխատելուն: Խանը՛մ, իմեն հ'էվարին որ մարթն կուկյեր տուն, էնոր խավքյու մենեն կխարցներ. «Խա՛վքյ, էսօր եմ կնիկ վո՞վ ի պիրե տուն, ըռ՞ր ի կնացե, ի՞նչ արե»: Խավքյն հ'մեն մեյ-մեկ տեղյաքյի կպատմեր: Որ խավքյն կպատմեր, մարթն կէլներ կնգյան կուշտըմ կթըփեր:

- Խանը՛մ, ժամանակըմ էտա կնիկ ըսկուն օյիններ պիրեց էնոր կյլոխ. էլ մարթ չմնաց էտա կյեղի մեչ, որ չիտուր-չառեց: Խանըմ, մարթու չարեն կտրավ, պռնեց ուր կնգյան կապեց սյուն տորիս: Խանը՛մ, էնոր յարեր կուկյեն սնից կառցկեն. կառնեն կտանեն չյուր հ'էվարին, ուրենց պան կանեն, հ'էվարին կթողնեն, կնիկ էմ էլ կուկյեր տուն: Մարթն որ կուկյեր, խավքյուց կխարցներ, խավքյն մեյ-մեկ կպատմեր:

Ավուր մեկ կնիկ էլա́վ կնայ ճա́ղայ, մտ ճա́ղյըպան, ասայ. «Էրթա́մ էնոր խետ էսա պա́ն անեմ, մեր խավքյն բա́լքյիմ չակխի, չկիտնա ես կնայեր եմ ճա́ղայ»:

Էլա́վ, կնիկն էր փոպրակ աղուն իթա́լ քյամակ, կնայ ճա́ղայ:

- Պարև քյե ճաղյպան:

- Աստծու պա́րին:

- Դեռր կա՞:

- Խա, վալա: Ճաղայ պարապ ի:

Աղուն փարավ, իլիյ վեր ճա́ղյին, ուր քյեֆ-ուրախութեն խե ճա́ղյպնին արայ, ճա́ղյպան ասայ. - Կնի՛կ, կա́տիմ տյու կեր ճա́ղայ, ես քյեզնե հա́ղ չէր առնի, ա́լա́ պա մ'էլ վերա́ կուտե:

Ասայ. - Ճաղյպա'ն, մե ըննա խավքյըմ կա, ինչ որ ես անեմ, հ'էվարին եմ իրիկ կուկյա, էնոր կպատմի, էլ չեմ կանա մեչ եմ կաշուն եռա, տյու կանա՞ս ֆռըլդաղ մ'անե՝ էնոր կյլոխ ուտենքյ, որ հա́ղ չարթ էլնի, օրն ատըծուն հմեն օր ես կյամ քյո ճա́ղայն, կյամ խե քյո ծեռայ, մեր քյեֆ-ուրախութեն անենքյ:

Ասայ. - Կնի՛կ, էսօր անուշ փարքյ ի, արև ի, էլի կնա, խավքյու կաֆասի տեմ հ'ա́ռիքյ ծակի: Ճյուր էնան մոխիր արա, մոխատով աղ լիյ մեչ էնոր կաֆասին, չյուր խասնի էնոր բողազ, ընկուն արա, թռ կնա́ մտի քյո տուն: Իրիկուն հ'էվարին քյո իրիկ որ կուկյա, տը խարցնի էմէլ խավքյու մենեն: Խավքյն տ'ասի. «Էսօր էն կա́նդար անճրև իկե վեր եմ կյլխուն, ընկուն մոխիր, խող, քյար տվե մեչ եմ կաֆասին, որ հ'ըլին էլե տվե եմ բողազ, չեմ կիտե գյրիրա́ն-չխան բա́լըսըզի»:

Էլա́վ կնիկն էր, շոտըմ ճա́ղյպընի ասածին պես, արայ: Խանը́մ, լսի՛ կնկյան ֆելեր, չքյաշե սելեր:

Հ'էվարին էր, իրիկն էկավ տուն: Խավքյուլ խարցնեյ, ասայ. - Եմ խավքյ, էսօր վո՞վ իկե, վո՞վ ի կնայե:

Ասայ. - Աղեկ կխարցնես, քյո խավքյ մեչ կա́ֆասին կյլախնի մեչ չամռուտին, մոխիրին խատնի:

Ասայ. - Ի՞նչ էլե խա՛վքյ, ասփված խերն անի:

Ասայ. - Ի՞նչ տ'էլնի. էսօր էն կա́նդա́ր անճրև իկե՞, մեչ եմ կաֆասին հ'ըլին խող-մոխիր ի լցե, խելքյ չմնայեր ի եմ կյլոխ, էլնող-մտնող բա́լըսըր ի, հաշիվիյ տյուա ի:

Կնիկ ասայ. - Ի՞նչխ ի քյո խավքյու ասած, իֆթիրա՞ յի, թե չէ, զիզնիյ կպատռի, ընկուն կանի որ եմ մաքեն քյոն կյեշայուցին, մե հա էլի տյուա, անճրև իկե՞ր ի:

Մարթ էլա́վ տյուա, վիր կխարցնի, կասեն. էսօր անճրև չիկեր ի: Էն կա́խ մարթն ի, խետ ուր աֆքյարին անթռոյն կառնի, մե հա կզանի խավքյու կաֆասին, խավքյ կպիրի տակ, կասի. - Քյո խեր անիծեմ, դեմա́քյ տյու՞ն էլ էսա կա́նդա́ր օր իֆթիրա կանի՞ր:

Կա́ֆա́ան էր, որ ինկյավ տակ, մարթն կնայ վերեն, թամաշա արայ, որ աղվորթ ի, կա́ֆա́սի մեչ հ'ըլին մոխիր-ճյուր լըցե տվե խավքյու

բողազ: Էն կախ նոր մարթ ծեռ իզար վեր ծրյվերաց, «Հե՜յ վախ, ես ինչ խալթ ասիցի, մանգյար եմ խավքյ կասեր, ես չէ՞ր ավատա»:

- Խանը՛մ խասկըցա՞ր:

- Խա, խասկըցա:

- Խա, խավքյու տեր ինչխ փեռշըմավ վեր խավքյուն, տյու ըսկուն տը փեռշըմվես վեր քյու էրազին:

- Չէ՛, չեմ կիտե, պիտի ասես:

- Խանը՛մ, - ասաց, - մեկ առակ էլ կա ասեմ, նոր քյու էրազ տը պատմեմ, քյու մեխքյ քյու վիզ:

- Խանը՛մ, - ասաց, - վախտով մե հա կյեղացու մը հ'իմաստուն շունը՛մ կէլնի: Էտոնք էնոնց մալ-տավար, տուն-տեղ կթոնեն էտա շան ումուտ կէրթան խեստ ուրենց գործին, էն կանղար որ հ'իմաստուն էր էտես շուն, հավատալի էր: Ժամանակով աստվածութեն էսա մարթուն տղե մ'իտու, տղեն էր էլավ իրեքյ-չորս ամսվա տղա: Էն մեկ օր էն կյեղի ռես էնոր լաճն փսակեց, պըռնեց էտա կյեղսկան կանչեց խարսնիս, ուրախութեն: Կիշեր-ցերեկ իզին չիտուր էտա կյեղականթերաց, պախեց ուրախութեն, քյեֆ արիցին:

Էն շան տեր ուրենց տղեն թողին մեչ տես շան ումուտով, թողիցին կնացին ռեսի տուն խարսնիս: Էտես շուն կնաց զյլոխ իտիր տան տռան վերեն, պառկավ քյնավ: Շատ մնաց քիչ մնաց, վիշաբ հ'առքյից քյաշվավ, շան բաժնվե էկավ ցածր, էկավ, տղեն ուրուրոցից իխան տյուս, չյուր մեջքյ քյաշեց պերան: Շուն բիրդան ակխավ, աչք ինգյավ թեխ վիշաբ: Տեսավ որ վիշաբ չյուր մեչք կլլիր էր: «Հե՜յ վախ», ասաց, էն տեղից լցվավ իզար վիշաբու մեչք պըռնեց: Պըռնելուն պես վիշաբին չընչուիխեց, վիշաբի պերան թուլցավ, տղեն իթող պաց: Էն տեղ վիշաբին կըտրըտտեց, լցեց ուրուրոցի տակ: Շան զյլոխ, չյունքյ մուտեն ըստեղ էլավ արուն: Տղեն էր, շուն մըռթով վերուց իտիր վեր պառցին: Տղեն էր, մըռթով տարավ իպե տղեն, չյուր քյնավ: Որ տղեն քյնավ, բիրդան տղի խեր-մեր էկան տուն, թամաշա արին՝ շուն կայնե ուրուրոցի բաժն ի վե: Իրիշկացին որ շուն մեչ արընին շաղաղվիր էր, էնոնց աչքերաց մըթընկըտաց, ասիցին. «Հե՜յ վախ, էսա շուն մեր տղեն կիրեր ի»: Բիրդան փետն ասին, մե հա զանիցին շան: Զարկելուն պես՝ շուն խատավ: Ուրուրոց վերուցին տրին էնտեղ իրիշկացին տղեն մեչ ուրուրոցին սաղ-սելիմ պառկեր ի: Մեկ էլ իրիշկացին ուրուրոցի տակ, ահաքին լցուկ ջանդակ ի, ատուն-արընճյուր ի: Կնացին վերեն իրիշկացին որ վիշաբ ի: Էն կախ նոր փեռշըմվան, ասին. «Էսա ի՞նչ էր, մենքյ մեր աչքեր քեռոցուցինք, ծընգյվեր թուլցուցինքյ, մանգյար մեր շուն ըսնա հ'իմաստու՞ն էր. էսա վիշաբն իկե մեր տղեն ուտելու, մեր շուն վիշաբին կիրել ի, մենքյ զարկինքյ մեր շուն խատուցինքյ»:

- Խանը՛մ, էնոնք ինչխ որ փեռշըմվան վեր ուրենց շան, տյու էլ ըսկուն տը փեռշըմվես վեր քյո էրազին: Խանը՛մ, ասե՞մ, թե՞ չասեմ:

Ասաց. - Տյու պիտի պատմես զի, եմ էրազ որ չպատմես, քյու վիզ կկտրեմ:

- Քյու մուր քյու ճակատ, կանչի թաքավոր, թո կյաւ էսա տեղ, ես պատմեմ քյե քյո էրազ:

Թաքավորուն ասիցին, էկավ էն տեղ:

- Թաքավո՛ր, - ասաց, - քյո ախչկան էրազ կասեմ, աման սոն տը ֆեոշըմվի՝ էլ բոշ: Խանը՛մ, էն ծուկ որ մեչ ծովուն կխաղա, հ'առաճ պստիկ էր, մկա ճոչացեր ի մեչ ծովուն, որ կխաղա, էն ծուկ չի, քյո տղեն ի, որ մեչ քյո փորին կխաղա:

Էն կախ ախչիկ կյոն իտուր, կյոն ասից, ասաց. «Հեյ վա՜խ, էսա ի՞նչ քյաքյ էր՝ ես կերաս, մարթն իրեք առակ իթալ եմ առաճ, ես չավատացի, չկիտցա»:

Խերն չվստահացավ, չավատաց, ասաց. - Կուզեմ, որ էսա խոսք ըսպաթ անեքյ:

Ասաց. - Խա, թե որ ըսպաթ չարիցի, եմ վիզ հ'ատճն ջալադին:

Էլավ թաքավորու ծեռ պռնեց, մտավ մեչ լաղմին, կնաց դներաց հ'էրից էլավ տյուս: Ասաց. - Թաքավոր ապրած կենա՛, կտիսնա՞ս էսա քյառսուն դներ, քյո ախչկա յարերն են:

Էլավ անուն ասպիծուն արաց, քյառսուն դնու վիզն էլ կտրեց: Էլավ ճոչ դնու կյլոխն կտրեց, առեց իպե:

Ասաց. - Թաքավո՛ր, էսա կյլոխ կտանենքյ, կպի՛ոնենքյ քյո ախչկան հ'էոդի տըրնտրտու հ'ատաճ, մենքյ պաղ կտնենք, թո քյո ախչիկ էլնի տյուս: Թե որ էնոր աչք ինգյավ էսա դնու կյլոխ՝ ախ արա՛ց, կիտցի՝ էնոր յարն ի. թե որ ախ չարաց՝ նոր վիզ կտրի:

Էլան կյլոխ տարան պիպռեցին հ'էոդի տրրնտրտու վերեն: Առատմախառ ախչիկն էլավ տյուս, մե հատ էնոր աչք-իրես լվաց: Թաքավորն ինաւն հ'իմաստուն տղեն էկան մտան մեչ ախչկա հ'էոդին: Ախչիկն էտ թարանջից խետ էլավ վեր, աչք ինգյավ դնու կյլոխ:

«Ա՜խ» արաց. - Քյո զարկոդի վի՛զն էլ կտռվի հ'ատճն ջալադի:

Հ'իմաստուն լաճն ասաց. - Լսի՛, թաքավոր, լսի՛:

Էն կախ թաքավորն ի, ախչիկ կկանչի. - Հեյ ախչիկ, - ասաց, - քյո պատիճ շատ ի, տյու եմ նամուս կտրիցիր:

Էն կախ բեռզ ծին կքյաշի տյուս, ախչկան ծամեր կկապի ծիյու պոչ, սեյիս կխեծուցի վեր ծիյուն, կասի. - Դե քշի ֆլան սար ֆռացրու, հ'էվարին քյեզնե կուզեմ ծամեր պիրես տուն:

Էն կախ թաքավոր լաճուն կասի. - Արե՛ եմ ծեռ պաքյի, պստիկ ախչիկն տամ քյե, եմ մեռնելուց սորա թաքավորութեն տյու վայելի:

Ախչիկն ի, կիսակի վեր լաճուն: Յոթն օր, յոթ կիշեր իսոր խարանիս կանի, կէրթա տղի մերն էլ կպիրի մո զինքյ:

Էնոնք խասան ուրենց մուրազին, տյու էլ քյո մուրազին:

Երկնուց իրեքյ խնճոր եճաւ, մեկն ատողին, մեկն լսողին, մեկն էլ գյիր արողին: